ՍՈՒԼԹԱՆ ԱԲԴՈՒԼ ՀԱՄԻԴ II-Ի ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԱԲԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

Պատմ. գիտ. դոկտոր Ն. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Արաբական պատմագրությունը բավականին հարուստ ավանդույթներ ունի Հայաստանի և հայ ժողովրդի պատմության տարբեր շրջանների լուսաբանման բնագավառում։ Դա պայմանավորված է ինչպես պատմական-աշխարհագրական, այնպես էլ քաղաքական հանգամանքներով։ Հայերը և արաբները պատկանում են միևնույն աշխարհագրական միջավայրին՝ Մերձավոր Արևելքին և վաղնջական ժամանակներից նրանց միջև հաստատվել են տարաբնույթ քաղաքական, առևտրատնտեսական և մշակութային կապեր։ Երբեմն-երբեմն այդ կապերը չափազանց ինտենսիվ բնույթ են կրել, հատկապես այն ժամանակներում, երբ նրանց ճակատագրերը քաղաքական առումով հանգուցվում էին և կամ սերտորեն խաչաձևվում, մանավանդ երբ արաբները և հայերը հայտնվում էին միևնույն պետական միավորման շրջանակներում։ Այս հանգամանքը չէր կարող չնպաստել երկու ժողովուրդների մերձեցմանը, հատկապես այն շրջանում, երբ արաբները և հայերի արևմտյան հատվածը հայտնվեցին Օսմանյան բռնատիրական կայսրության տիրապետության ներքո։ Եվ դարերի ընթացքում կուտակված այս հարուստ շերտը պետք է որ իր շատ թե քիչ համարժեք արտացոլումը գտներ ինչպես հայկական, այնպես էլ արաբական պատմագրության մեջ։ Սակայն չպետք է կարծել, թե բոլոր ժամանակներում արաբական պատմագրությունը միևնույն աստիճանի հետաքրքրություն է ցուցաբերել պատկերավոր ասած՝ հայկական նյութի հանդեպ։ Այդ բնագավառում եղել են վերելքներ և վայրէջքներ, սակայն ոչ ընդմիջումներ։

Վերջին տասնամյակներում արաբական պատմագրության կողմից կրկին նկատվում է հարաճուն հետաքրքրություն հայ ժողովրդի ինչպես ամբողջական պատմության, այնպես էլ դրա առանձին պրոբլեմների նկատմամբ։ Կահիրեում, Դամասկոսում, Հալեպում, Բեյրութում և այլուր լույս են տեսնում ոչ միայն բազմաթիվ հոդվածներ և հաղորդումներ, այլև առանձին ստվարածավալ մենագրական ուսումնասիրություններ, որոնցում քննության են ենթարկվում հայ ժողովրդի անցած ուղին, նրա մաքառումները իր ազգային ինքնատիպությունը և գոյությունը պահպանելու համար, նրա ներդրումը համաշխարհային քաղաքակրթության զարգացման մեջ և բազմաթիվ այլ հարցեր։

Բնականաբար հարց է ծագում, թե որո՞նք են հայկական թեմայի հանդեպ արաբական պատմագրության մերօրյա հետաքրքրության աճի և կամ այդ թեմային դիմելու դրդապատճառները։ Դրդապատճառները շատ են, ուստի մենք կանգ կառնենք միայն դրանցից ամենագլխավորների բացահայտման վրա, որոնք, ինչպես կարծում ենք, հանդիսանում են հիմնային և կողմնորոշիչ բնույթ ունեն։

Առաջին. XIX դարի երկրորդ կեսին—XX դարի սկզբներին, արաբական քաղաքական միտքը հանգեց մի կարևոր ճշմարտության՝ որ գոյություն ունի ընդհանրություն արաբների և հայերի, ինչպես նաև հույների, սլավոնների և Օսմանյան կայսրության մյուս ոչ թուրք ժողովուրդների շահերի միջև օսմանյան բռնատիրական լծից ազատագրվելու հարցում։ Արաբական ազգային-քաղաքական գործիչները գտնում էին, որ իրական հիմք կա միավորելու կայսրության բոլոր ոչ թուրք ժողովուրդների ջանքերը իրենց ազգային գոյության, ինքնության և արժանապատվության պահպանման համար մղվող պայքարում։ Այդ առումով հիշատակության է արժանի «Արաբական հայրենիքի Լի-

գայի» գլխավոր կոմիտեի 1905 թ. հրապարակած «Արաբական երկրները արաբներին» կոչը, որտեղ ասվում էր. «Թուրքիայից մեր անջատման փաստի շնորհիվ ճնշված բոլոր ազգերը՝ քրդերը, հայերը, ալբանացիները և այլն, իրենց ազատությունը պիտի ձեռք բերեն, քանի որ արաբների միջոցով է, որ սանձահարում են ալբանացիներին և ալբանացիների ձեռքով է, որ ճզմում են բուլղարներին։ Դարձյալ արաբների ձեռքով է, որ ճնշում են քրդերին և քրդերի ձեռքով է, որ ջարդում են հայերին։ Հետևաբար, հենց որ մենք լքենք սուլթանին (Աբդուլ Համիդ II-ին—Ն. Հ.), ամեն մի ազգ պիտի իր անկախությունը հռչակի»[1]։ Խիստ ուշագրավ է արաբական աշքի ընկնող քաղաքական գործիչ Նաջիբ Աղուրիի նամակը հայ հասարակական գործիչ, «L' Armenie» թերթի հրատարակիչ Մինաս Չերազին, թվագրված 1905 թ. ապրիլի 15-ով։ Նամակում Աղուրին շնորհակալություն է հայտնում հայերին այն «խանդավառության համար, որով դիմավորեցին արաբների հայրենիքի զարթոնքը և այն վեհանձն կամպանիայի համար, որ բարեհաճեց ձեռնարկել ի նպաստ մեր ազգային շարժման»[2]։ Դրանով իսկ, շարունակում է Նաջիբ Աղուրին, «մյուս կուսակցություններից առաջ հայերը մի անգամ ևս ցույց տվեցին, որ գիտակցում են մեր ընդհանուր շահերը»[3]։ Նա հայերի ամենակարևոր արժանիքներից մեկը համարում է այն, որ «հայերը չեն վախեցել տասը տարի առաջ (այսինքն 1890-ականներին, Աբդուլ Համիդի տիրապետության շրջանում—Ն. Հ.) արթնացնելու իրենց ազգային զգացմունքը ասիական ժողովուրդների մեջ թուրքաշերքեզական բռնակալության դեմ, այնպես ինչպես հույները XIX դարի սկզբում համարձակություն ունեցան ազդանշան տալ բալկանյան ժողովուրդներին աղատագրվելու քմահաճ փաղիշահների դաժան բռնակալությունից»[4]։ Արաբական գործչի եզրահանգումը, որը բնորոշ է նաև XIX դարի վերջերի—XX դարի սկզբների արաբական մյուս ազգային-քաղաքական գործիչներին, հետևյալն է. «Պետք է ճանաչենք և հասկանանք իրար և պետք է միանանք հարձակվելու համար ընդհանուր թշնամու դեմ, որն այնքան շատ օգտվեց մինչև հիմա մեր անհամաձայնությունից մեզ առանձին-առանձին ջախջախելու համար»[5]։ Արաբական ժամանակակից պատմագրությունը, անդրադառնալով հայ ժողովրդի տարբեր շրջանների պատմության հարցերին, այդ թվում և աբդուլհամիդյան շրջանին, մեկնակետ ունի Օսմանյան կայսրության ոչ թուրք ժողովուրդների շահերի ընդհանրության գաղափարը, որը, ինչպես նշվեց, XIX դարի երկրորդ կեսի և XX դարի սկզբների արաբական քաղաքական մտքի արգասիքն է։

Երկրորդ, ինչպես նշել ենք, արաբները և արևմտահայերը Օսմանյան կայսրության հպատակներն էին և դարձել էին բախտակից ժողովուրդներ։ Նրանք գտնվում էին համանման ծանր քաղաքական պայմաններում։ Հետևաբար, թուրքական սուլթանին ենթակա որևէ ոչ թուրք ժողովրդի (տվյալ դեպքում՝ հայերի) պատմության ուսումնասիրության ուղղությամբ կատարվող ամեն մի քայլ արաբական ժամանակակից պատմաբանները դիտում են որպես շատ կարևոր քայլ բուն արաբ ժողովրդի պատմության ավելի խորը և բազմակողմանի ուսումնասիրության, նրա այս կամ այն պրոբլեմն ավելի հիմնավոր կերպով ըմբռնելու և ճշմարտացիորեն լուսաբանելու համար։ Դրանով է պայմանավորված նրանց աճող հետաքրքրությունը XIX դարի վերջի—XX դարի սկզբի Արևմտյան Հայաստանի պատմության հանդեպ։

---

1 Արաբական մի շարք փաստաթղթեր արաբա-թուրքական հարաբերությունների վերաբերյալ. կազմեցին, թարգմանեցին և ծանոթագրեցին Հ. Ս. Սարգսյանը և Ա. Հ. Թուիայանը.— Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. VI, Արաբական երկրներ. Երևան, 1974, էջ 218։

2 Նույն տեղում, էջ 219։

3 Նույն տեղում։

4 Նույն տեղում, էջ 219—220։

5 Նույն տեղում, էջ 220։

Այստեղ պետք է ի նկատի ունենալ մի կարևոր հանգամանք ևս։ XIX դարի երկրորդ կեսին սկսվեց արաբների կուլտուր-լուսավորչական և քաղաքական զարթոնքը, որը պատմության մեջ մտել է Նահդա հորջորջմամբ։ Արաբների պատմության այդ ժամանակահատվածի ուսումնասիրությունը շարունակում է մնալ արաբական ժամանակակից պատմագրության ուշադրության կենտրոնում։ Սակայն այս հարցի առնչությամբ մեզ հետաքրքրողն այն է, որ հայերը զգալի դեր են խաղացել արաբական Զարթոնքի (Նահդայի) սկզբնավորման և զարգացման գործում, մանավանդ Լիբանանում, Սիրիայում և Եգիպտոսում։ Եվ Նահդայի դարաշրջանն անհնար է ամբողջականորեն և հարազատորեն լուսաբանել առանց հայ գործիչների դերի լուսաբանման, որը և, ի դեպ, մեծ շնորհակալությամբ կատարում են արաբական պատմաբանները։ Այսպես, օրինակ, լիբանանցի պատմաբան Յուսուֆ Յազբեկը ընդգծում է, որ «ազնիվ հայերի մի խումբ մասնակցեց գրական վերածննդին, որը սկսվեց մեզանում անցյալ դարում»[6]։ Նա նշում է Գրիգոր Վարդապետի, Հաննա Աբգարիոսի, Ռղալլա Հասունի (Հասունյան), Հովսեփ Բաքոսի անունները, որոնք դրվում են Նահդայի արաբական երևելի գործիչների՝ Սամին Շմեյիլի, Համզա ալ-Հուսեյնի, Միքայել Մշակկայի, Բուտրուս ալ-Բուստանիի, Նասիֆ ալ-Յազիջիի և այլոց անունների կողքին։ Արաբական բոլոր հետազոտողները, խոսելով Նահդայի դարաշրջանի մասին, առանձնացնում են նրա ամենապայծառ աստղերից մեկին՝ հայազգի Ադիբ Իսհակին (Զալմատյան), որի գործունեությունը խոր հետք է թողել հետագա շրջանի արաբական քաղաքական մտքի և հոգևոր-ինտելեկտուալ զարգացման վրա։ Արաբ պատմաբան Էմիլ Թուման նրան համարում է XIX դարի արաբական ազգային գաղափարախոսության ճանաչված առաջնորդը[7]։ Եթե սրան ավելացնենք, որ XIX դարի երկրորդ կեսից սկսած հայերը ակնառու դեր են խաղացել արաբական երկրների, մասնավորապես Լիբանանի և Եգիպտոսի պետական կյանքում, երբ 1861 թ. ինքնավարություն ստացած Լիբանանի առաջին կառավարիչը եղավ Հարություն Կարապետ Դաուդյանը[8], իսկ 1880-ական թթ. Եգիպտոսի պրեմիեր-մինիստրի պաշտոնը երկար ժամանակով զբաղեցնում էր Նուբար Նուբարյանը, ապա պարզ կդառնա հայերի խաղացած նշանակալի դերը արաբական երկրների քաղաքական կյանքում և հոգևոր-մշակութային բնագավառում։ Դրա հետ միաժամանակ հասկանալի կդառնան արաբների կողմից հայերի XIX դարի և XX դարի սկզբի պատմությանն անդրադառնալու շարժառիթները։

Երրորդ, հայտնի է, որ թուրքական կոտորածներից փրկված շատ հայեր ապաստան գտան արաբական տարբեր երկրներում, մասնավորապես Սիրիայում, Լիբանանում, Եգիպտոսում, Իրաքում, Հորդանանում և այլուր։ Նրանց թիվն այսօր մոտավոր հաշիվներով կազմում է մոտ կես միլիոն։ Արաբական երկրներում հաստատված հայերը յուրաքանչյուր տարվա ապրիլի 24-ին հրապարակորեն նշում են Եղեռնի օրը։ Արաբների ավագ սերունդը, որն ականատես էր եղել հայկական ջարդերին և հյուրընկալորեն ընդունել էր հայ տարագիրներին, շատ լավ ծանոթ էր հայկական ողբերգությանը։ Սակայն այժմ աճել է մի սերունդ, որը շատ աղոտ կերպով կամ համարյա ոչինչ չգիտե այդ մասին, նրանցից շատերը չգիտեն անգամ, թե հայերն ինչու և ինչպես են հայտնվել

---

[6] يوسف بزبك ، دور الارمن في الازمة التاريخية بين الفاتيكان والبطريرك اسطفان — « المدينة » ، بيروت ، ١٩٧٤ ، العدد ٢٤ ص ١٥

(Յուսուֆ Յազբեկ. Հայերի դերը Վատիկանի և պատրիարք Ստեփանոսի միջև ծագած կոնֆլիկտի ժամանակ.—«Ալ-Մադինա», Բեյրութ, 1974, № 24, էջ 15)։

[7] Э. Тума. Национально-освободительное движение и проблема арабского единства (перевод с арабского), М.. 1977, с. 78—79.

[8] Հետագայում այդ պաշտոնը ստանձնեցին ևս երեք հայ գործիչներ, այդ թվում և վերջին մութասարրիֆ Հովհաննես Գույումջյանը։ Լիբանանի ինքնավար ստատուսը երիտթուրքերը վերացրին 1914 թ.

արաբական երկրներում։ Բեյրութում նորերս արաբերեն՝ լեզվով լույս է տեսել «Հայկական ջարդերը» գիրքը, որտեղ ամփոփված են Թուրքական պաշտոնյա Նաիմ-բեյի հուշերը և լիբանանյան բազմաթիվ պետական, քաղաքական-հասարակական և մշակութային գործիչների կարծիքները հայերի նկատմամբ օսմանյան սուլթանների և երիտթուրքերի պարագլուխների կիրառած քաղաքականության մասին։ Գրքի առաջաբանում նշվում է, որ «ամբողջ ժողովրդի նոր սերնդի մեջ կան շատ մարդիկ, որոնք չդիտեն ճշմարտությունը... հայկական կոտորածների և նրանց իրենց հայրենիքից արտաքսելու մասին»[9]։ Միաժամանակ ընդգծվում է, որ արաբական նոր սերունդը «չի հասկանում, թե ինչու հայերը յուրաքանչյուր տարի նշում են հիշատակը մի դեպքի, որ տեղի է ունեցել սրանից յոթանասուն տարի առաջ (ի նկատի ունի 1915 թ. Եղեռնը—Ն. Հ.)»[10]։ Եվ ահա արաբական մերօրյա սերնդին հայ ժողովրդի պատմության, այդ թվում և նրա ողբերգական էջերի հետ ծանոթացնելը դարձել է արաբական պատմագրության կողմից հայկական թեմային անդրադառնալու շարժառիթներից մեկը։ Ըստ որում դա արաբ պատմաբանների համար ունի նաև այն նշանակությունը, որ դրանով իսկ լուսաբանում են ոչ միայն արևմտահայերի, այլև ջարդերից փրկված և արաբական երկրների բնակչության բաղադրամասը դարձած թեև էթնիկական առումով տարբեր մի հատվածի պատմությունը։ Ահա այս ձևով արաբ և հայ ժողովուրդների պատմությունը հանգամանքների բերումով ինչ-որ տեղ խաչաձևվում և միահյուսվում է և դա չէր կարող չարտացոլվել արաբական պատմագրության մեջ։

* * *

Ժամանակակից արաբական պատմաբանների աշխատությունների ուշադիր զննումը ցույց է տալիս, որ նրանք Արևմտյան Հայաստանի XIX դարի վերջին քառորդի—XX դարի սկզբի պատմությունը որոշակիորեն բաժանում են երեք շրջանի. առաջին՝ սուլթան Աբդուլ Համիդ II-ի կառավարման մոտալ տարիները, այն ընդգրկում է 1876—1909 թթ., երկրորդ՝ երիտթուրքերի տիրապետության շրջանը և երրորդ՝ առաջին համաշխարհային պատերազմի ժամանակահատվածը։ Մոտ քառասունամյա ժամանակաշրջանի բաժանումը երեք փուլերի ընդհանուր առմամբ ճիշտ է ինչպես բուն Օսմանյան կայսրության ներքին զարգացման, այնպես էլ Հայկական հարցի ելևէջների և արևմտահայերի ճակատագրի տեսանկյունից։

Սույն հոդվածում մենք կանգ կառնենք այն հարցի վրա, թե արաբական ժամանակակից պատմագրությունն ինչպես է գնահատում Օսմանյան կայսրության քաղաքականությունը հայկական հարցում առաջին փուլում կամ, այլ կերպ ասած, Աբդուլ Համիդի հայկական քաղաքականության գնահատականի վրա։ Այդ խնդրին նվիրված ժամանակակից արաբական պատմագրական գրականությունը կարելի է բաժանել երկու խմբի։ Առաջին խումբը կազմում են այն հեղինակները, որոնք Աբդուլ Համիդի հայկական քաղաքականությանն անդրադարձել են Մերձավոր Արևելքի կամ արաբների պատմությանը նվիրված ընդհանուր բնույթի աշխատություններում։ Դրանցում, բնականաբար, հայկական թեման իր ծավալով մեծ տեղ չի գրավում, թեև պետք է նշել, որ դրանք արժեքավոր են նախ և առաջ իրենց հարցադրումներով և տված գնահատականներով։ Այդպիսի ուսումնասիրություններից են Էմիլ Թումայի, Զեյն Զեյնի, Ամին Սայիդի, Շաքիր Խասբակի, Ալբերտ Հաուրանիի, Յուսուֆ Յաղբեկի և այլոց ուսումնասիրությունները։ Երկրորդ խմբի մեջ մտնում են արաբական այն հեղինակները, որոնք հատուկ ուսումնասիրություններ են նվիրել հայ ժողովրդի պատմությանը, ոմանք ընդգրկելով այն ամբողջությամբ, ոմանք էլ՝ այս կամ այն ժամանակահատվածը կամ պրոբլեմը։ Դրանցից առավել ուշագրավներն են

---

9 مجازر الارمن ، اعداد باروير يرتسيان ، بيروت ، ١٩٨٦ ، ص ١٣
(Հայկական ջարդերը, պատրաստեց Պարույր Երիցյանը. Բեյրութ, 1986, էջ 13)։

10 Նույն տեղում։

Ուսման-աթ-Թուրքի «Էջեր հայ ազգի պատմությունից»[11], Մրվան ալ-Մուդավարի «Հայերը պատմության ընթացքում»[12], Մուսա Պրենսի «Հայասպանություն»[13], Ֆուադ Հասան Հաֆիզի «Հայ ժողովրդի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը»[14] և այլն։ Որպես կանոն այդ աշխատությունները գրված են աղբյուրագիտական հարուստ հիմքի վրա, նրանցում լայնորեն օգտագործված են տարալեզու գիտական գրականություն, մամուլ, հուշագրություններ և այլ աղբյուրներ, որը հնարավորություն է տվել հեղինակներին պրոբլեմը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում մանրազնին և խորը քննության ենթարկել։ Արաբ հեղինակներն իրենց դատողություններում անկախ են, տուրք չեն տալիս զգայացունց հուզականությանը և գերադասում են սառը և աչալուրջ վերլուծական մոտեցումը, որը, հասկանալի է, բարձրացնում է նրանց գիտական արժեքը։

Աբդուլ Համիդ II-ին, որը օսմանյան սուլթանական գահի վրա մնաց մոտ 33 տարի՝ 1876—1909 թթ., արաբական պատմագրության մեջ սովորաբար կոչում են «աս-սուլթան ալ-ահմար»՝ «կարմիր սուլթան»։ Նրան այդպես են անվանում եգիպտացի պատմաբան Ֆուադ Հաֆիզը, սիրիացի պատմաբան Մրվան Մուդավարը, լիբանանցի պատմաբան-իրավաբան Մուսա Պրենսը («Le Sultan rouge»)[15] և ուրիշներ։ Ֆուադ Հաֆիզը միանգամայն բնութագրական է համարում այն փաստը, որ Աբդուլ Համիդը իր գործունեությունը որպես սուլթան սկսեց «իր բոլոր եղբայրների և նրանց ընտանիքի անդամների սպանությունից»[16]։ Արյան համն առնելով հենց սկզբից, այնուհետև նա չբավարարվեց առանձին անհատներով և իր արյունոտ քաղաքականությունը տարածեց ամբողջ ժողովուրդների վրա։ «Այդ սուլթանը,—նշում է Մրվան ալ-Մուդավարը,— որը նույնպես և արդարացիորեն կոչվում է «կարմիր սուլթան», 33 տարիների ընթացքում երկաթյա ձեռքով կառավարեց Օսմանյան կայսրությունը»[17]։ Բաժանելով նրա տեսակետը, Ֆուադ Հաֆիզն ընդգծում է, որ Աբդուլ Համիդի «անունը «կարմիր սուլթան էր», որովհետև նա արյունոտ ջարդերի կազմակերպիչ էր»[18]։ Առաջին հայացքից կարող է թվալ, թե նման որակումը վերաբերում է սուլթանի լոկ անձնական հատկանիշներին, սակայն դժվար չէ նկատել, և դա ցույց կտրվի ստորև, որ դրանով բնութագրվում է Աբդուլ Համիդի ամբողջ ներքին քաղաքականությունն ընդհանրապես և ազգային քաղաքականությունը՝ մասնավորապես։

Այս հարցի հետ ուղղակի առնչություն ունի Աբդուլ Համիդի հաստատած ռեժիմի գնահատականը, որ տրվում է արաբ պատմաբանների կողմից։ Այն համարվում է «զուլումիա»՝ բռնակալության ռեժիմ։ Աբդուլ Համիդի վայրագ վարչաձևը հենց այդպես է բնութագրում լիբանանցի պատմաբան Զեյն Զեյնը („Hamidian tyrannical regime"), ընդգծելով, որ տարեցտարի այն ավելի ու ավելի դաժան էր դառնում[19]։ Նույն կարծիքին է նաև պաղեստինցի մարքսիստ-պատմաբան Էմիլ Թուման, որն անհրաժեշտ էր համարում տարբեր ազգերի և ուժերի միավորումն «ընդդեմ զուլումի ռեժիմի»[20]։ Այսպիսով, Աբդուլ

---

11 عثمان الترك ، صفحات من تاريخ الامة الارمنية ، حلب ، ١٩٦٠

12 مروان المدور ، الارمن عبر التاريخ ، بيروت ، ١٩٨٢

13 Moussa Prince. L'Armenocide. Introduction. Beyrouth, 1967.

14 فؤاد حسن حافظ ، تاريخ الشعب الارمنى منذ البداية حتى اليوم ، القاهرة ، ١٩٨٦

15 Moussa Prince. Op. cit., p. 28.

16 Ֆուադ Հաֆիզ. նշվ. աշխ., էջ 201։

17 Մրվան ալ-Մուդավար. նշվ. աշխ., էջ 309։

18 Ֆուադ Հաֆիզ. նշվ. աշխ., էջ 201։

19 Zeine N. Zeine. Emergance of Arab Nationalism. N. Y., 1973, p. 47.

20 Э. Тума Указ. соч., с. 81.

Համիդը արաբ պատմաբանների պատկերացմամբ ոչ թե մի սովորական ինքնակալ էր, այլ արյունախում «կարմիր սուլթան», իսկ նրա ստեղծած կառավարման ձևը ամենաբիրտ ու դաժան «զուլումի»՝ բռնակալության մարմնավորում։ Միայն այս երկու տարրերի օրգանական միասնությունն է հնարավորություն տալիս ճիշտ պատկերացում կազմել Օսմանյան կայսրության ոչ թուրք ժողովուրդներին հսկայական չարիք պատճառած սուլթանի մասին։

Բնականաբար հարց է ծագում, թե ի՞նչ հիման վրա է Աբդուլ Համիդը արաբ պատմաբանների կողմից հորջորջվում որպես «կարմիր սուլթան» և որքանով է այն առնչվում հայկական իրականության հետ։ Միամտություն կլիներ կարծել, թե արաբ պատմաբանները Աբդուլ Համիդին բնութագրում են «արյունարբու «կարմիր սուլթան», իսկ նրա ռեժիմը՝ բռնակալական, ելնելով միայն հայկական իրողությունից և հենվելով միայն Արևմտյան Հայաստանում տեղի ունեցած փաստերի և դեպքերի վրա։ Նրանք այս հարցում ցուցաբերում են լայնախոհություն և միանգամայն ճիշտ մոտեցում։ Ժամանակակից արաբ պատմաբանները իրենց եզրահանգումներում հիմնվում են համընդհանուր օսմանյան պրակտիկայի վրա և ելնում են սուլթան Աբդուլ Համիդի ազգային քաղաքականությունից՝ առանց բացառության բոլոր ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ։ Օսմանյան կայսրությունը, լիբանանցի պատմաբան Յուսուֆ Յազբեկի բառերով ասած, «սուլթան Աբդուլ Համիդի բանտն էր»[21]։ Եվ արար պատմաբանները միանգամայն ճիշտ կերպով սուլթան Աբդուլ Համիդի քաղաքականությունը հայերի նկատմամբ դիտարկում են նրա ընդհանուր ազգային քաղաքականության ծիրի մեջ։ Նման մոտեցումը, մեր կարծիքով, մի կողմից հնարավորություն է տալիս ավելի ամբողջական պատկերացում կազմելու օսմանյան կառավարողների ազգային քաղաքականության մասին, իսկ մյուս կողմից, ավելի լավ ըմբռնելու հայկական ողբերգության պատճառները։ Դա առավել ճիշտ է նաև այն առումով, որ Հայկական հարցի շատ հաճախ նկատվող քննարկումն առանձնակի, չկապակցված օսմանյան ընդհանուր ազգային քաղաքականության և մյուս ոչ թուրք ժողովուրդների ճակատագրի հետ, տեղիք է տալիս զանազան թյուր կարծիքների և դուռ բացում տարբեր, ոչ ճիշտ մեկնաբանությունների առջև։

Արաբ պատմաբանները նկատել են, որ XIX դարի կեսերից սկսած Օսմանյան կայսրության տիրակալներն ավելի ու ավելի հաճախ են դիմում ջարդերի քաղաքականությանը։ Դա մի տեսակ դառնում է ներքաղաքական կյանքի նորմերից մեկը, որն իր գագաթնակետին է հասնում Աբդուլ Համիդի սուլթանության սարսափելի տարիներին։ Ֆուադ Հաֆիզը հայոց պատմությանը նվիրված իր աշխատության մեջ կազմել է այդ ջարդերի համառոտ ցանկը։ Ահա այն։ Ցուցակում առաջինը նա նշում է 1860 թ. ջարդերը Լիբանանում, որ տեղի ունեցան օսմանյան կառավարիչների կողմից դրուզներին քրիստոնյա մարոնիների վրա հրահրելու հետևանքով, որոնք կոտորեցին նրանց և արտաքսեցին բնակած վայրերից։ Դրան հաջորդում է հայերի կոտորածը Զեյթունում 1861—1862 թթ., որոնց դեմ ուղարկվեց թուրքական կանոնավոր բանակ և, ինչպես նշում է Ֆուադ Հաֆիզը, ոտքի հանվեցին շրջակա թուրքական և քրդական գիղերը։ Այնուհետև նա նշում է հույների ջարդը Կրետե կղզում 1866—1868 թթ., բոսնիացիների և հերցեգովինցիների ջարդը 1875 թ. և բուլղարների սարսափելի կոտորածը 1876 թ.-[22]։ Կարելի է ասել, որ ջարդերի քաղաքականությունը գնում էր վերընթաց գծով, որի ամենաբարձր կետը եղավ հայերի կոտորածը 1894—1896 թթ.։ Դրան կանդրադառնանք առանձին։

---

[21] يوسف ابراهيم يزبك ، حكاية اول نوار في العالم وفي لبنان ، بيروت ، ١٩٧٤ ، ص ٤٨

(Յուսուֆ Իբրահիմ Յազբեկ. Աշխարհում և Լիբանանում մայիսմեկի պատմությունը. Բեյրութ, 1974, էջ 48)։

[22] Ֆուադ Հաֆիզ. նշվ. աշխ., էջ 96։

Իսկ այժմ նշենք, որ Աբդուլ Համիդը, ինչպես և նրան նախորդած սուլթանները, արար պատմաբանների խորին համոզմամբ չէին հարգում անգամ իրենց կողմից ընդունված որոշումները, որոնք վերաբերում էին կայսրության ոչ թուրք ժողովուրդներին։ Այդ հարցին հատուկ ուշադրություն են դարձրել Զեյն Զեյնը, Ուսման աթ-Թուրքը և մյուսները։ Զեյն Զեյնն ընդգծում է, որ Օսմանյան կայսրության մեջ հավասարություն չկար քրիստոնյաների և մուսուլմանների միջև, «անհավասարությունը վերացվել էր ձևականորեն, այսինքն թղթի վրա՝ 1856 թ. Խաթթը Հումայունի դեկրետով։ Չնայած դրան, իրականում ամբողջ XIX դարում շարունակում էր գործել միլլեթների հին սիստեմը»[23]։ Նա միլլեթների սիստեմը դիտում է որպես անհավասարության պահպանման ձև և քրիստոնյաներին մուսուլմաններին ենթարկելու եղանակ։ Այդ միլլեթների մեջ Զեյնը իր նշանակությամբ որպես առաջինը նշում է միլլեթ-ի-ռումի, այսինքն հույն ուղղափառ համայնքը։ Իր նշանակությամբ հաջորդը հայկական միլլեթն էր և ապա հրեականը[24]։ Այլ կերպ ասած, չնայած ռեֆորմներին, հայերի, հույների և այլ ժողովուրդների իրավիճակի մեջ ոչ մի փոփոխություն տեղի չէր ունեցել և Աբդուլ Համիդի ժամանակ նրանք սովորական ռայաներ էին։ Նույն կարծիքին է նաև Ուսման աթ-Թուրքը, որը գտնում է, որ ռեֆորմի վերաբերյալ ընդունված բոլոր դեկրետները «մնացին թղթի վրա»[25]։

Աբդուլ Համիդի ազգային քաղաքականությունը, այդ թվում և հայկական քաղաքականությունը հասկանալու տեսանկյունից որոշակի հետաքրքրություն է ներկայացնում Ստամբուլում ֆրանսիական դեսպան Պոլ Կամբոնի հաղորդագրությունը Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրին, որի լրիվ տեքստն իր գրքում բերում է Զեյնը։ Ըստ որում արաբ պատմաբանը լրիվ համամիտ է ֆրանսիական դիվանագետի հետ։ Զեկուցագրում դեսպանը «Հայկական հարցի կապակցությամբ հայտնում է, որ իրադրությունը առանձնահատուկ էր ոչ միայն Հայաստանի համար, այլև ամբողջ կայսրության համար մի ծայրից մինչև մյուսը. հույները, ալբանացիները, արաբները գանգատվում են արդարության բացակայությունից, կառավարական պաշտոնյաների ծախվածությունից և կյանքի ապահովության բացակայությունից»[26]։

Այսպիսով, ըստ արաբ պատմաբանների, օսմանյան կառավարողների ազգային քաղաքականությունն ուղղված էր ոչ թե մեկ ազգի, ոչ միայն հայերի, այլև կայսրության բոլոր ոչ թուրք ժողովուրդների շահերի դեմ. Աբդուլ Համիդի տիրապետության ժամանակ այն ընդունեց ցեղասպանության բնույթ և բարձրացվեց պետական պաշտոնական քաղաքականության աստիճանի։ Մրվան ալ-Մուդավարն իր աշխատության ենթաբաժիններից մեկը հենց այդպես էլ վերնագրել է՝ «Հայկական հարցը և գենոցիդի կամպանիան սուլթան Աբդուլ Համիդ II-ի շրջանում», որտեղ որոշակիորեն ասված է, որ «նրա բռնակալական կառավարումը ձնշում էր կայսրության բոլոր ժողովուրդներին, մասնավորապես դրանցից արաբական ժողովուրդներին, բալկանյան ժողովուրդներին և հայ ժողովրդին»[27]։ Այլ կերպ ասած, այդ բոլոր ժողովուրդներն էլ կանգնած էին ցեղասպանության վտանգի առջև։

Բնականորեն հարց է ծագում, թե ժամանակակից արաբական պատմագրությունը ինչպե՞ս է բացատրում Աբդուլ Համիդի դաժան ազգային, այդ թվում և հայահալած քաղաքականությունը, որտե՞ղ է փնտրում դրա արմատները։ Ի պատիվ արաբ հետազոտողների, գոհունակությամբ պետք է ընդգծել, որ նրանք չեն փորձել խուսափել այդ հարցին պատասխանելուց, չեն շրջանցել այն։ Նրանցից մի քանիսը առաջ են քաշում բավականին համարձակ տեսակետներ, որոնք դժվար թե անաչառ ընթերցողի մոտ առարկության տեղիք տան։ Այդ տեսակետից խիստ ուշագրավ է եգիպտացի ժամանակակից հայտնի պատմա-

[23] Zeine N. Zeine. Op. cit., p. 28.
[24] Նույն տեղում։
[25] Ուսման աթ-Թուրք. նշվ. աշխ., էջ 186։
[26] Zeine N. Zeine. Op. cit., p. 65.
[27] Մրվան ալ-Մուդավար. նշվ. աշխ., էջ 395։

բան, պրոֆեսոր Մուհամեդ Շակիկ Ղարբալի տեսակետը, որ «Հայ ժողովրդի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը» գրքում մեջբերում է Ֆուադ Հաֆիզը, լրիվ համերաշխվելով նրա հետ։ Պրոֆ. Շակիկ Ղարբալն ընդգծում է, որ «օսմանյան պետության ձախողման, լճացման, կարծրացման և քայքայման պատճառները կայանում էին նրանում, որ նա իր արմատներով չէր հենվում կրոնական, քաղաքական և սոցիալական նոր մտքի վրա, այլ հենվում էր պատերազմների և էքսպանսիայի վրա»[28]։ Այդ նեխող օրգանիզմն իր ամբողջ գոյության ընթացքում երբեք նոր գաղափարներ չի առաջադրել, այլ իր գոյությունը խարսխել է զենքի և նվաճումների վրա։ Եվ երբ կայսրության ենթակա ոչ թուրք ժողովուրդները սկսեցին հանդես գալ հանուն իրենց ազգային իրավունքների, հատկապես XIX դարում, ապա օսմանյան սուլթանները չունեին համապատասխան գաղափարներ՝ այդ պրոցեսները հասկանալու և նրանց ընդառաջ գնալու համար։ Ուստի և նրանք այդ ելույթները դիմավորեցին թշնամաբար, ապավինելով յաթաղանի զորությանը։ Եվ որպես դատավճիռ են հնչում Շակիկ Ղարբալի խոսքերն այն մասին, որ «օսմանցիները վերցնող և ոչ թե տվող ազգ էին»[29]։ Հենց դա էլ հանգեցրեց կայսրության թուլացմանը, քայքայմանը և, ի վերջո, կործանմանը, այստեղ պետք է փնտրել ոչ թուրք ժողովուրդների իրավունքների նկատմամբ օսմանյան կառավարողների անհաշտ դիրքորոշման պատճառները։

Ուշագրավ է և որոշ իմաստով Շակիկ Ղարբալի տեսակետը լրացնելու է գալիս սիրիացի պատմաբան Ուսման աթ-Թուրքի կարծիքը։ «Օսմանցիները,— գրում է նա,—իրենց հպատակների հետ խաղաղ կերպով ապրելու քաղաքականություն չէին վարում։ Իրենց քաղաքականությունը չէին հիմնում իրավունքի և արդարության վրա... Ռասայական և ցեղային քաղաքականությունը՝ ահա թե որն էր այդ ժամանակ հաղթանակել կառավարողների ուղեղում։ Այդ քաղաքականության պատճառով նրանց ձեռքից գնացին Հունաստանը, Սերբիան և Բուլղարիան։ Հետո նրանցից բաժանվեց Լիբանանը[30] և նրանց դեմ ըմբոստացան արաբները... Եվ հայերը միակը չէին, որ գտնվում էին պայքարի մեջ, այլ բազմաթիվ ժողովուրդներ էին ազդարարել իրենց ազատության մասին»[31]։

Այսպես, ուրեմն, նոր, թարմ քաղաքական և սոցիալական գաղափարներ առաջադրելու անկարողությունը և ապավինումը զենքին, բռնությանը և ռասայական ու ցեղային մարդատյաց գաղափարներին՝ ահա թե, ըստ արաբական պատմագրության, ինչ հիմքի վրա, ինչպիսի պայմաններում և մթնոլորտում է ձևակերպվել օսմանյան կառավարողների, այդ թվում և սուլթան Աբդուլ Համիդի ազգային քաղաքականությունը։ Մեզ թվում է, որ Ղարբալի և աթ-Թուրքի տված բացատրությունները գիտական, միանգամայն ճշմարտացի բնույթ են կրում և հանդիսանում են բանալի՝ Աբդուլ Համիդի, ինչպես նաև նրան հաջորդած երիտթուրքերի ոճրագործ քաղաքականությունը հայկական հարցում ճիշտ ըմբռնելու և բացատրելու համար։

* * *

Արաբական պատմագրության մեջ համընդհանուր ճանաչում է ստացել այն տեսակետը, որ Աբդուլ Համիդի ջարդերի քաղաքականության գագաթնակետը եղան հայերի 1894—1896 թթ. կոտորածները, որոնց զոհ գնաց մոտ 300 հազար մարդ։ Ըստ ժամանակակից արաբ հետազոտողների, այդ կոտորածները լոկալ բնույթի չէին և չէին սահմանափակված որևէ շրջանով կամ անգամ վիլայեթով, այլ ընդգրկեցին կայսրության բոլոր հայաբնակ վայրերը, այդ թվում և մայրաքաղաք Ստամբուլը։ Սկսվելով 1894 թ. Սասունում, կոտորածներն տյնուհետև, ինչպես նշում է Ֆուադ Հաֆիզը, տարածվեցին հայկական բոլոր վեց վիլա-

28 Ֆուադ Հաֆիզ. նշվ. աշխ., էջ 180։

29 Նույն տեղում։

30 Ի նկատի ունի Լիբանանի ինքնավար ստատուս ստանալը։

31 Ուսման աթ-Թուրք. նշվ. աշխ., էջ 191։

լեթների՝ Էրզրումի, Խարբերդի, Սվասի, Բիթլիսի, Վանի և Դիարբեքիրի վրա[32]։ Կոտորածների վայրերն ավելի մանրամասնորեն է թվարկում Ուսման աթ-Թուրքը։ Նա ընդգծում է, որ հայ բնակչության արյունալի և սարսափելի շարդեր տեղի ունեցան Տրապիզոնում, Էրզնջանում, Բաբերդում, Բիթլիսում, Էրզրումում, Արաբկիրում, Դիարբեքիրում, Մալաթիայում, Խարբերդում, Սվասում, Մարաշում, Կայսերիայում և կայսրության այլ քաղաքներում ու գյուղերում, որտեղ հայ ազգաբնակչություն կար[33]։

Արաբ պատմաբաններն ընդգծում են, որ կոտորածները սուլթանի կողմից մանրամասնորեն էին նախապատրաստված և նույնիսկ նշում, որ հայերի նկատմամբ նրա քաղաքականությունը 1890-ական թթ. սկսած բացահայտ պրովոկացիոն բնույթ էր կրում։ Նրանք այստեղ առաջին հերթին ի նկատի ունեն Աբդուլ Համիդի 1891 թ. որոշումը «Ֆուրսան ալ- Համիդիե»՝ «Համիդյան հեծելազոր» ստեղծելու մասին, որը կազմավորվեց բացառապես քրդերից[34]։ «Դա,—նշում է Ուսման աթ-Թուրքը,—իրականում ստեղծվեց հայերին սպառնալու համար»[35]։ Նույն տեսակետն է արտահայտված լիբանանյան հանրագիտարանում, որի 10-րդ հատորում զետեղված է շատ հարուստ նյութ Հայաստանի վերաբերյալ։ Այստեղ նշվում է, որ «կարմիր սուլթանը», հրաժարվելով հայկական շրջաններում ռեֆորմներ իրականացնելուց, ձեռնամուխ եղավ հայերի նկատմամբ հալածանքների և բռնությունների կիրառմանը, մինչև որ բանը հասավ 1894—1896 թթ. ջարդերին։ Նա, այսինքն սուլթանը, զինեց քրդերին և նրանցից «կազմեց զորամիավորումներ, որ հայտնի են «Համիդիե» անունով, որոնք կառավարության թողտվությամբ ավերածություններ գործեցին Հայաստանում»[36]։ Նման հաստատումներ կարելի է գտնել նաև Մուսա Պրենսի, Ֆուադ Հաֆիզի և արաբական այլ հետազոտողների մոտ։

Մեր նպատակը չէ այստեղ մանրամասն ներկայացնել 1894—1896 թթ. կոտորածների նկարագրությունը, որ տրվում է արաբ պատմագրության մեջ։ Այդ հարցը հանգամանորեն լուսաբանված է պատմագիտական գրականության մեջ և հարկ չկա այն կրկնելու, մանավանդ որ արաբ պատմաբանները փաստական նյութի առումով որևէ նոր բան չեն ավելացնում։ Ավելի կարևոր են նրանց կողմից տրված գնահատականները, որը հակիրճ կերպով ներկայացնում ենք ստորև։

Սիրիացի հետազոտող Խեյրի Համան այդ ջարդերն անվանում է դաժանային[37]։ Լիբանանցի պատմաբան Ջամիլ Խաբրը իր «Հայերը և Լիբանանը» աշխատության մեջ քննարկելով հայերի արտագաղթի և արաբական երկրներում նրանց հաստատվելու հարցը և ընդունելով, որ դա արդյունք էր այն հալածանքների և բռնությունների, որոնց հայ ժողովուրդը ենթարկվում էր Թուրքիայում, ընդգծում է, որ այդ բոլորն «սկսվեց սուլթան Աբդուլ Համիդի ժամանակ, երբ 1894—1896 թթ. իրագործվեցին բարբարոսական ջարդեր և հազարավոր հետապնդվողներ նետվեցին հարևան երկրներ և Լիբանանը դրանցից

---

32 Ֆուադ Հաֆիզ. նշվ. աշխ., էջ 208։

33 Ուսման աթ-Թուրք. նշվ. աշխ., էջ 290։

34 Նույն տեղում, էջ 196։

35 Նույն տեղում։

36 دائرة المعارف ، قاموس عام لكل فن ومطلب بادارة فؤاد البستاني ، المجلد العاشر ، بيروت ، ١٩٧٣ ، ص ٣٠٩

(Լիբանանյան հանրագիտարան, խմբ. Ֆուադ Բուստանի. հ. 10, Բեյրութ, 1973, էջ 309)։

37 خيرى حما ، اضواء اولية على المسألة الارمنية . — « المناضل » دمشق ، ١٩٨٣ ، العددان ١٦٣ - ١٦٤ ، ص ٢١

(Խեյրի Համա. Հայկական հարցի լուսաբանումը.—«Ալ-Մունադիլ», Դամասկոս, 1983, № 163—164, էջ 21)։

մեկն էր»[38]։ Մուսա Պրենսը, շրջանառության մեջ դնելով նոր տերմին՝ արմենոցիդ, այսինքն հայասպանություն, 1894—1896 թթ. կոտորածներն անվանում է համիդյան արմենոցիդ („l'Armenocide hamidien")[39]։ Դրանով փաստորեն սկիզբ դրվեց հայկական գենոցիդին և Մուսա Պրենսը միանգամայն իրավացիորեն Աբդուլ Համիդին կոչում է «մեծ ոճրագործ»[40], մի անվանում, որը հավասարի իրավունքով իր տեղը գրավեց «կարմիր սուլթան» անվան կողքին։ Եվ, վերջապես, ուշագրավ է նաև Ֆուադ Հաֆիզի տեսակետը, որը հանդիսանում է Մուսա Պրենսի արտահայտած կարծիքի յուրօրինակ շարունակությունը։ «Սուլթան Աբդուլ Համիդ II-ը,—նշում է եգիպտացի պատմաբանը,—սկսեց գործադրել իր հայկական քաղաքականությունը, որ կանխագծվել էր նախկինում՝ բնաջնջել հայերին իր պետության մեջ»[41]։

Նույն ոգով են արտահայտվում նաև Ուսման աթ-Թուրքը, Մրվան ալ-Մուդավարը և այլք։

Այսպիսով, ըստ արաբ պատմաբանների, 1894—1896 թթ. Աբդուլ Համիդի կազմակերպած ջարդերն իրենց բնույթով գաղանային և բարբարոսական էին և ըստ էության հանդիսանում են ցեղասպանություն կամ, օգտագործելով Մուսա Պրենսի արտահայտությունը, հայասպանություն։ Այս տեսակետն է տիրապետող հանդիսանում արաբական պատմագրության մեջ։

Արաբ պատմաբաններն անդրադարձել են նաև այն շարժառիթներին և պատրվակներին, որ սուլթան Աբդուլ Համիդը օգտագործել է իր այսպես կոչված հայկական քաղաքականությունը, այսինքն կոտորածները կազմակերպելու և արդարացնելու համար։ Դրանց մեջ, մեր կարծիքով, ուշադրավ են երկու հանդամանք։

Առաջին, սուլթանի և նրա շրջապատի կողմից հակահայկական արշավ սանձազերծելու համար որպես առիթ օգտագործվում էր 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Կովկասյան ճակատում ռազմական գործողություններին ռուսահայերի՝ որպես ռուսաց պետության զինվորների մասնակցելու փաստը։ Իրոք, Կովկասյան ռազմաճակատում ռազմական գործողությունները ղեկավարում էին ռուսական բանակում ծառայող հայ գեներալներ Միքայել Լորիս-Մելիքովը, Արշակ Տեր-Ղուկասովը, Հովհաննես Լազարևը և ուրիշներ, որոնց մասին արաբ պատմաբանները հարգանքով են արտահայտվում։ Նրանց հրամանատարությամբ ռուսական զորքերը գրավեցին համարյա ամբողջ Արևմտյան Հայաստանը։ Այդ առնչությամբ արաբ պատմաբանները, ինչպես, օրինակ, Ֆուադ Հաֆիզը, նշում են, որ «ռուսական զորքերին միացան ռուսահայերի մի քանի ջոկատներ»[42], որոնք հերոսաբար մասնակցում են Արևմտյան Հայաստանի քաղաքների և գյուղերի ազատագրմանը օսմանյան լծից։ Արաբ պատմաբանները դա համարում են միանգամայն բնական երևույթ և դրանում տեսնում են արևելահայերի զգացմունքների և դիրքորոշման դրսևորում հանդեպ իրենց արևմտահայ եղբայրների ճակատագիրը։

Հայտնի է, որ հետագայում, եվրոպական տերությունների ճնշման տակ, ռուսական զորքերը դուրս բերվեցին Արևմտյան Հայաստանից։ Սակայն «կարմիր սուլթանը» չէր մոռացել արևելահայերի մասնակցությունը պատերազմական գործողություններին և այդ հողի վրա սկսեց հալածանքներ արևմտահայերի դեմ։ «Հայերի կոտորածները,—նշում է Ֆուադ Հաֆիզը,—սկսվեցին սուլթան Աբդուլ Համիդ II-ի շրջանում 1877 թ. օսմանյան-ռուսական պատերազմից հետո։

---

[38] جميل خبر ' الارمن ولبنان . — « المدينة » ' بيروت ' ١٩٧٤ عدد ٢٤ ص ١٧

(Ամիլ Խարր. Հայերը և Լիբանանը.—«Ալ-Մադինա», Բեյրութ, 1974, № 24, էջ 17)։

[39] Moussa Prince. Op. cit., p. 29.

[40] Նույն տեղում։

[41] Ֆուադ Հաֆիզ. Նշվ. աշխ., էջ 212։

[42] Նույն տեղում, էջ 197։

Եվ դա որպես պատիժ օսմանյան հայերին այն բանի համար, որ նրանց ռուսահայ եղբայրները մասնակցել էին ռուսական արշավանքին Անատոլիա և որը գլխավորում էին երեք ականավոր ռուսահայ զորավարներ՝ գեներալներ Միքայել Լորիս-Մելիքովը, Արշակ Տեր-Ղուկասովը և Հովհաննես Լազարևը»[43]։

Արևմտահայերին ներկայացված մեղադրանքները արաբ պատմաբանները համարում են անհիմն ու անհեթեթ։ Անդրադառնալով այդ հարցին, նույն Ֆուադ Հաֆիզը դիպուկ կերպով նկատում է, որ «օսմանյան հայերը պատասխանատու չէին օսմանյան պետության ու ցարական Ռուսաստանի միջև Հայաստանի բաժանման համար, որ տեղի էր ունեցել այդ պատերազմից շատ առաջ, և ոչ էլ այն բանի համար, որ ռուսահայերը դարձել էին ցարական Ռուսաստանի հպատակներ»[44]։ Սակայն սուլթանը և նրա շրջապատը միտումնավոր կերպով անգիտանում էին այդ փաստը, և արևմտահայերի վրա նետելով ոչ վստահելի քաղաքացիների կասկածը, սկսում են ուժեղացնել բռնություններն ու հալածանքները, որոնք, ի վերջո, վերածվեցին կոտորածների։

Երկրորդ, ժամանակակից արաբ հեղինակները վկայում են, որ օսմանյան կառավարողները հայկական ջարդերը կազմակերպելու համար որպես պատրվակ օգտագործել են նաև արևմտահայերի օրինական պահանջները Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ կիրառելու վերաբերյալ։ Այդ կապակցությամբ նրանք իրենց ուսումնասիրություններում հատուկ քննարկման առարկա են դարձնում 1878 թ. փետրվարի 19-ին Սան-Ստեֆանոյում կնքված պայմանագրի 16-րդ և 1878 թ. հուլիսի 13-ին կնքված Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածները, որոնք ուղղակի առնչություն ունեին Հայկական հարցի և հայերի պահանջների հետ։ Արաբ հետազոտողները, ինչպես, օրինակ, Մրվան ալ-Մուդավարը, հատկապես շեշտում են այն հանգամանքը, որ Բարձր Դուռը, ըստ Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածի, պարտավորվում էր բարելավել հայերի վիճակը հայկական վիլայեթներում[45]։ Իսկ Ուսման աթ-Թուրքը բարձր է գնահատում այն հանգամանքը, որ Սան-Ստեֆանոյի պայմանագիրը ստորագրելիս ռուսական ներկայացուցիչները հաջողացրին պայմանագրի տեքստի մեջ մտցնել հայերի պահանջները[46]։ Եվ որպես շատ կարևոր քայլ, արաբ հեղինակներն առանձնացնում են պայմանագրի այն մասը, ըստ որի ռուսական զորքերը մնալու էին Արևմտյան Հայաստանում, մինչև որ բարենորոգումներն իրականացվեին։

Հայտնի է, որ այդ պայմանագրով նախատեսվող բարենորոգումները չիրագործվեցին։ Բացատրելով դրա պատճառները, արաբ պատմաբանները դրա համար մեղադրում են ոչ միայն սուլթան Աբդուլ Համիդին, այլև եվրոպական մեծ տերություններին, առաջին հերթին Անգլիային և Գերմանիային։ «Անգլո-ռուսական մրցակցությունը և բիսմարկյան մաքիավելիզմը,—նշում է Մուսա Պրենսը,—կանխեցին... Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածի իրագործումը»[47]։ Արաբ պատմաբանները միակարծիք են այն հարցում, որ եվրոպական մեծ տերությունների շահերին չէր համապատասխանում Ռուսաստանի ազդեցության ուժեղացումը և նրանք ձգտում էին պահպանել Օսմանյան կայսրությունը՝ որպես պատվար «ընդդեմ ռուսական էքսպանսիայի»[48]։ Հենց նրանց նախաձեռնությամբ էլ 1878 թ. հունիս-հուլիսին հրավիրվեց Բեռլինի կոնգրեսը, որը Սան Ստեֆանոյի պայմանագիրը փոխարինեց Բեռլինի պայմանագրով, որի 61-րդ հոդվածը վերաբերում էր արևմտահայերին։ Թեև այդ հոդվածով նույնպես նախատեսվում էր ռեֆորմների կիրառում Արևմտյան Հա-

---

43 Նույն տեղում, էջ 205։

44 Նույն տեղում։

45 Մրվան ալ-Մուդավար. նշվ. աշխ., էջ 396։

46 Ուսման աթ-Թուրք. նշվ. աշխ., էջ 188։

47 Moussa Prince. Op. cit., p. 28.

48 Ֆուադ Հաֆիզ. նշվ. աշխ., էջ 198։

յաստանում, սակայն ռուսական զորքերը պետք է անհապաղ դուրս բերվեին Արևմտյան Հայաստանից, որը և Ռուսաստանը հարկադրված կատարեց։ Դա սկզբունքային տարբերություն էր՝ համեմատած Սան Ստեֆանոյի պայմանագրի հետ, որը շատ լավ նկատել են արաբ հեղինակները։ Նրանց միանգամայն ճիշտ կարծիքով հայերը զրկվեցին ռուսական երաշխիքից և ռեֆորմների հուշակումը, ինչպես դիտում է Ուսման աթ-Թուրքը, մնաց «որպես տեսական ցանկություն»[49]։ Բայց ավելին։ Բանն այն է, որ հայերի վիճակն ավելի վատացավ։ Այդ մասին ուղղակի խոսում է Ֆուադ Հաֆիզն իր աշխատության մեջ, նշելով, որ Բեռլինի պայմանագրի ստորագրումից և Արևմտյան Հայաստանից ռուսական զորքերի դուրս բերումից հետո օսմանյան պետությունը ոչ միայն չիրագործեց 61-րդ հոդվածով նախատեսվող ռեֆորմները և հայերի վիճակի բարելավումը, այլև, ընդհակառակը, ուժեղացրեց բռնությունները հայերի նկատմամբ[50]։ Եվրոպական պետությունների գրաված դիրքը ազատություն տվեց Աբդուլ Համիդին, ուստի և Ուսման աթ-Թուրքը լրիվ իրավունք ունի ասելու, որ «այդ պետություններն (եվրոպական—Ն. Հ.) անկեղծ չէին հայերին թուրքական ստրկացումից ազատագրելու հարցում»[51]։

Իսկ ինչպիսի՞ն էին արևմտահայերի պահանջները, արդյոք նրանք չէի՞ն պարունակում այնպիսի ցանկություններ, որոնք կարող էին սպառնալ օսմանյան պետության ամբողջականությանն ու գոյությանը և, հետևաբար, ինչ-որ չափով պատրվակ ծառայեին սուլթանի համար՝ կազմակերպելու հայկական ջարդեր։ Արաբական պատմագրության մեջ այս հարցը լուսաբանված է բավականին հանգամանորեն և արաբ բոլոր հեղինակները, առանց բացառության, ժխտական պատասխան են տալիս վերոհիշյալ հարցերին։ Նրանք քաջածանոթ են հայերի պահանջներին և մեկնում են դրանցից, մասնավորապես Բեռլինի կոնգրեսին հայերի պատվիրակության կողմից ներկայացված Հուշագրի բովանդակությունից և դրույթներից։ Հայտնի է, որ Բեռլինի կոնգրեսին մասնակցելու համար հայերը կազմեցին մի պատվիրակություն Խրիմյան Հայրիկի գլխավորությամբ, որը կոնգրեսի մասնակիցների առջև պետք է ներկայացներ հայերի պահանջները։ Հայտնի է նաև, որ կոնգրեսը մերժեց թույլատրել հայկական պատվիրակությանը մասնակցելու նրա աշխատանքներին, քանի որ այն, ինչպես նշված է լիբանանյան հանրագիտարանում, «նրանց (եվրոպական պետությունների—Ն. Հ.) տեսակետի համաձայն, պետություն չէր ներկայացնում»[52]։ Սակայն պատվիրակությունը կոնգրեսին ներկայացրեց մի Հուշագիր, որտեղ շարադրված էին հայերի գլխավոր պահանջները։

Մանրակրկիտ կերպով ուսումնասիրելով հայերի պահանջները և հենվելով այդ Հուշագրի ու այլ փաստաթղթերի վրա, արաբ պատմաբանները դալիս են այն համոզմանը, որ արևմտյան հայերը չէին դնում Օսմանյան կայսրության կազմից դուրս գալու և անկախ պետություն ստեղծելու հարցը։ Նրանց պահանջները հանգում էին Օսմանյան կայսրության շրջանակներում վարչական ինքնավարություն ստանալուն։ Եվ արևմտահայերի համար որպես օրինակ էր ծառայում Լիբանանը։ Ինչպես նշել ենք, 1861 թ. Լեռնալիբանանին տրվեց ինքնավարության ստատուս, Օսմանյան կայսրության շրջանակներում, ըստ որի այն ինքնավար էր դառնում ներքին վարչական հարցերում։ Սուլթանը Լեռնալիբանանը կառավարելու համար նշանակում էր փոխանորդ՝ մութասառիֆ, որը կարող էր լինել միայն քրիստոնյա։ Եվրոպական մեծ տերությունները հանդիսանում էին Լեռնալիբանանի ինքնավարության երաշխավորներ։

Արևմտահայերն էլ ուզում էին նման մի բան և դա հաստատում են արաբ հեղինակները։ «Ոգևորված լիբանանյան նախադեպով,—ընդգծում է Մուսա Պրենսը,—հայերը ցանկանում էին մի համեստ վարչական ինքնավարություն,

---

49 Ուսման աթ-Թուրք. նշվ. աշխ., էջ 189։
50 Ֆուադ Հաֆիզ. նշվ. աշխ., էջ 205։
51 Ուսման աթ-Թուրք. նշվ. աշխ., էջ 195։
52 Լիբանանյան հանրագիտարան. հ. 10, էջ 309։

ավելի քիչ հավակնոտ, քան Լեռնալիբանանի միջազգային ստատուսը»[53]։ Նույնանման տեսակետ է արտահայտում Ֆուաադ Հաֆիզը։ Եգիպտացի գիտնականը նշում է, որ հայերը չէին պահանջում անջատվել օսմանյան պետությունից, բայց պահանջում էին ստեղծել քրիստոնեական ինքնավար վարչություն՝ միջազգային երաշխիքով, ինչպես Լիբանանի վարչաձևը[54]։ Նույն բանը հաստատում են նաև մյուս արաբ հետազոտողները։ Ահա սա էր արևմտահայերի գլխավոր պահանջը, որն անհրաժեշտ է միշտ ի նկատի ունենալ՝ հայ ժողովրդի հանդեպ Աբդուլ Համիդ II-ի կատարած հանցագործության ամբողջ խորությունը ճիշտ հասկանալու համար։ Արաբ պատմաբանների ուսումնասիրությունները գալիս են հաստատելու, որ հայ ժողովուրդը ջարդերի որևէ առիթ չէր տվել, դրա համար հիմք չկար և մտացածին է ու հերյուրանք հայ ժողովրդին սեպարատիստական նկրտումներ վերագրելը, որի նպատակն է արդարացնել «կարմիր սուլթանի» ջարդարարական քաղաքականությունը։

Հավաստելով անջատողական ձգտումների բացակայությունը հայերի մոտ, արաբ պատմաբանները, մյուս կողմից, միանգամայն օրինական են համարում հայերի պահանջները, Օսմանյան կայսրության շրջանակներում, հայկական վիլայեթներում լիբանանյան տիպի վարչական ինքնավարության հաստատումը։ Այդ կապակցությամբ հետաքրքիր միտք է արտահայտում Ֆուաադ Հաֆիզը. «Բոլոր դեպքերում սուլթան Աբդուլ Համիդ II-ի հայկական քաղաքականությունը կամ, այլ կերպ ասած, ջարդերի քաղաքականությունը, որ իրագործվում էր, դա նրա ներքին քաղաքականության մասն էր կազմում։

Ճշմարտությունն այն է, որ օսմանյան հայերի ջարդերը օսմանյան պետության անարդարացի և անօրինական պատասխանն էր նրանց արդարացի և օրինական պահանջներին, որը միջազգային ճանաչում ուներ»[55]։

Այս տեսակետը, այսինքն՝ հայերի պահանջների արդարացի և օրինական լինելը, իսկ Աբդուլ Համիդի գործողությունների անօրինական լինելը, հաստատուն տեղ է գրավել արաբական պատմագրության մեջ և չի վիճարկվում որևէ մեկի կողմից։

Արաբ պատմաբանները, ուշի ուշով հետևելով սուլթան Աբդուլ Համիդի քաղաքականությանը հայկական հարցում, նրանում նկատում են որոշակի էվոլյուցիա։ Սկսելով հալածանքներից ու բռնություններից և անցնելով ջարդերի քաղաքականությանը, սուլթանը կանգնեց Հայկական հարցը «արմատականորեն» լուծելու «տեսակետի» վրա։ Դա իր արտահայտությունը գտավ Աբդուլ Համիդ II-ի՝ իր նախադեպը չունեցող ձևակերպման մեջ. «Հայկական հարցին վերջ տալու համար անհրաժեշտ է ամենից առաջ վերջ տալ հայերին»[56]։ Մըրվան ալ-Մուդավարը հենց դա համարում է «գենոցիդի քաղաքականություն՝ սուլթան Աբդուլ Համիդ երկրորդի դարաշրջանում»[57]։ Նույն տեսակետին է նաև Մուսա Պրենսը, ընդգծելով, որ Սասունի 1894 թ. ջարդերը վերածվեցին «համընդհանուր գենոցիդի 1895—1896 թթ.»[58]։ Ինչպես արդեն նշել ենք, Մուսա Պրենսը, ավելի կոնկրետացնելով գենոցիդի բովանդակությունը, հանգեց այն եզրակացության, որ հայերի դեպքում ավելի ճիշտ կլինի այն փոխարինել արմենոցիդ հասկացությամբ։ Մրվան ալ-Մուդավարի և Մուսա Պրենսի տված գնահատականները հավասարապես բնորոշ են արաբ մյուս պատմաբանների դիրքորոշմանը։

Ամփոփելով նշենք, որ արաբ պատմագրությունը սուլթան Աբդուլ Համիդ II-ի հայկական քաղաքականության տակ հասկանում է զանգվածային կոտո-

---

53 Moussa Prince. Op. cit., p. 28

54 Ֆուաադ Հաֆիզ. նշվ. աշխ., էջ 199։

55 Նույն տեղում, էջ 203—204։

56 Մրվան ալ-Մուդավար. նշվ., աշխ., էջ 367։

57 Նույն տեղում, էջ 395։

58 Moussa Prince. Op. cit., p 28—29.

րածների քաղաքականություն և Հայկական հարցի լուծում հայերի իսպառ ոչնչացման ուղիով։ Դրա արմատները ժամանակակից արար պատմաբանները տեսնում են Օսմանյան կայսրության քաղաքական և սոցիալ-տնտեսական կառուցվածքի և պետական քաղաքականության աստիճանի բարձրացրած ռասայական-շովինիստական կոնցեպցիաների մեջ։

АНТИАРМЯНСКАЯ ПОЛИТИКА СУЛТАНА АБДУЛ ГАМИДА II В ОЦЕНКЕ СОВРЕМЕННОЙ АРАБСКОЙ ИСТОРИОГРАФИИ

Доктор ист. наук Н. О. ОГАНЕСЯН

Резюме

За последние годы наблюдается повышенный интерес у арабских историков к новой истории Армении, в том числе и к периоду правления султана Абдул Гамида II (1876—1909 гг.). Наряду с общими работами Эмиля Тумы, Амина Саида, Зейн Зейна, Альберта Хаурани, Юсуфа Язбеки и других, появились специальные работы, в том числе и монографические исследования по истории Армении, в которых подробно и объективно освещается политика Абдул Гамида II в отношении армян. Среди них следует отметить «Страницы из истории армянской нации» Усмана ат-Турка, «Армяне через историю» Мрвана ал-Мудавара, «Арменоцид» Мусы Пренса, «История армянского народа с начала до наших дней» Фуада Хафиза, а также небольшие по объему, но весьма интересные работы Дамиля Хабра, Хейри Хамы и др.

Изучение указанного вопроса привело современных арабских историков к выводу, что под армянской политикой султана Абдул Гамида II следует понимать политику массовых погромов, принимавшей в итоге форму арменоцида как разновидности геноцида. Причины этого явления арабские исследователи видят в политической и социально-экономической структуре османского государства и официальной расово-шовинистической идеологии, благоприятствовавших проведению султаном жесткой политики в отношении западных армян. Арабские историки обращают внимание также на то обстоятельство, что в османском государстве не были выдвинуты какие-либо новые серьезные политические или социальные идеи и оно уповало на грубую силу, войны и погромы.